ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՄԵՐԺՄԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2023 թվականի N _____-Ն

ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՄԵՐԺՄԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 356-L որոշման N 2 հավելվածի 5.1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման թույլտվության կամ մերժման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ կառավարության 2023 թվականի

_____-ի N _____-Ն որոշման

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՆԵՐԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՄԵՐԺՄԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի և հաստատված պլանի հիման վրա եզրակացություն (այսուհետ՝ եզրակացություն) տալու հետ կապված հարաբերությունները:

2. Կենդանական և բուսական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորները (այսուհետ՝ օպերատոր) նախքան արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին լիազոր մարմին դիմում ներկայացնելը և սննդի շղթայի օպերատորների բազայում գրանցվելը՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացնում են վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (այսուհետ՝ ՎՎՀԿԿ) սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի և հաստատված պլանի վերաբերյալ տեղեկատվություն՝ եզրակացություն ստանալու նպատակով: Արտադրական օբյեկտի պետական գրանցումը և սննդի շղթայի օպերատորների բազայում

գրանցվելը իրականացվում է միայն եզրակացության առկայության դեպքում։

3. Եզրակացությունը տրվում է լիազոր մարմնի կողմից՝ օպերատորի դիմումի հիման վրա։

4. Եզրակացություն ստանալու համար օպերատորը կամ նրա կողմից լիազորված անձը (այսուհետ՝ դիմումատու) առձեռն, կամ էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ համաձայն N 1 ձևի.
- ներդրված ՎՎՀՀԿ համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն և հաստատված պլանը.
- լիազորված անձի միջոցով դիմում ներկայացնելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրի պատճենը։

5. Լիազոր մարմինը փաստաթղթերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առձեռն կամ էլեկտրոնային եղանակով հաստատում է փաստաթղթերի ստացման, դրանց լիարժեքության կամ թերի լինելու փաստը։

6. Լիազոր մարմինը սույն կարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում իրականացնում է վարչական վարույթ՝ դրանց սույն կարգով սահմանված պահանջների համապատասխանությունը պարզելու նպատակով և համապատասխանելու դեպքում տալիս է եզրակացություն՝ համաձայն N 2 ձևի։

7. Վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով։

8. Լիազոր մարմնի կողմից դիմումը հետ է վերադարձվում, եթե պահանջվող տեղեկատվությունը թերի է և տրվում է 3 աշխատանքային օր՝ թերությունները վերացնելու համար։

9. Սահմանված պահանջների անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում՝ դիմումատուին տրվում է դրանք շտկելու մասին հանձնարարական, որի ժամկետը համաձայնեցվում է դիմումատուի հետ։

10. Հանձնարարականում նշված ժամկետում անհամապատասխանությունները վերացնելուց հետո՝ դիմումատուն 3 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնին գրավոր ծանուցում է հանձնարարականի կատարման և հայտնաբերված անհամապատասխանությունները վերացնելու մասին։ Ծանուցման մեջ նշվում են անհամապատասխանությունների վերացման փաստը և հայտնաբերված անհամապատասխանությունների վերացմանն ուղղված միջոցառումները։

11. Լիազոր մարմինը վարչական վարույթի արդյունքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները վերացնելու մասին ծանուցումն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է եզրակացություն ։

12. Եզրակացությունը տրվում է անժամկետ։

13. Եզրակացություն ստանալու մասին դիմումը մերժվում է լիազոր մարմնի որոշմամբ՝ սույն կարգով սահմանված պահանջներին անհամապատասխանությունները վերացնելու մասին հանձնարարականը չկատարելու դեպքում։

14. Եզրակացություն ստանալու համար ներկայացված դիմումը մերժելու մասին որոշումը՝ մերժման հիմքերի նշմամբ, լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով կամ առձեռն տրամադրում է դիմումատուին։

15. Դիմումատուն եզրակացությունը ստանալու մասին դիմումի մերժման վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկել՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վարչական կամ դատական կարգով։

16. Եզրակացությունը կորցնելու դեպքում՝ լիազոր մարմնի կողմից տրամադրվում է եզրակացության կրկնօրինակը, որի աջ անկյունում կատարվում է դրոշմակնքում՝ «Կրկնօրինակ» բառով։

_

_

_

_

_

_

_

<u>ՁԵՎ N 1</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Դ Ի Մ ՈՒ Մ

ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԼԱՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԵՆԴԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂ

ՄՆՆԴԻ ՇՂԹԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիմող՝ _____

(իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը,

_____

հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն)

_____

գործունեության ոլորտը (տեսակը)

Հասցե՝ _____

(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ վայրը)

ՓԱՍՏԱՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ _____

վայրը՝

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը,

անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը

_____

Հարկ վճարողի հաշվառման համարը

_____

Խնդրում եմ տալ եզրակացություն ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքների վրա հիմնված ըն

Դիմումին կից ներկայացնում եմ փաստաթղթերը
_____

Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Հետադարձ ծանուցման եղանակը՝ _____

(հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

Դիմող _____ _____

(ստորագրությունը, առկայության դեպքում նաև կնիք) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

<u>ՁԵՎ N 2</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ

ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԼԱՆԻ

N ____

Դիմումատու _____

(իրավաբանական անձի անվանումը, անհատ

_____

Հասցե _____

(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատ
բնակության վայրը)

ՓԱՍՏԱՑԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ _____

վայրը՝

Գործունեության ոլորտը (տեսակը) _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Տեսչական մարմնի ղեկավար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.